Սույնով տալիս եմ համաձայնություն առ այն, որ.

1. Բանկն իրավունք ունի առանց ինձ նախապես տեղեկացնելու և լրացուցիչ համաձայնություն ստանալու հարցումներ կատարել, ստանալ և օգտագործել (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ Բանկի կողմից օգտագործվող փաստաթղթերում զետեղել, վերլուծել, գնահատել և այլն) «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն»[1] փաստաթղթով սահմանված իմ վերաբերյալ տեղեկատվությունը «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամից, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրումների գրասենյակի» միջոցով համապատասխան մարմիններից և, առկայության դեպքում, «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» փաստաթղթով սահմանված այլ մարմիններից՝ ինձ հետ իրավահարաբերություններ ձևավորելու, Բանկի ծառայությունների համար պայմանագրեր, հայտեր կազմելու/գեներացնելու, իմ վարկավորման հնարավորությունները Բանկի կամ իմ նախաձեռնությամբ դիտարկելու և Բանկի կամ իմ նախաձեռնությամբ վարկավորման առաջարկներ ներկայացնելու նպատակով: Տեղեկացված եմ, որ սույն կետում նշված համաձայնությունը պարտադիր է Բանկի կողմից ինձ ցանկացած բանկային ծառայության մատուցման համար, այն կիրառելի է իմ կողմից տրամադրելու պահից և գործում է համապատասխան բանկային ծառայության տրամադրման հայտի դիտարկման, իսկ որևէ բանկային ծառայության գծով իմ և Բանկի միջև իրավահարաբերության ծագման դեպքում՝ այդ իրավահարաբերության ամբողջ ժամանակահատվածում: Սույն համաձայնությունը և Բանկի՝ «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» հրապարակային փաստաթուղթը կարդացել եմ, սույնով տրվող համաձայնության բովանդակությունն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է և հանդիսանում է իմ ազատ կամահայտության արդյունքը:
2. Բանկն իրավունք ունի առանց ինձ նախապես տեղեկացնելու և լրացուցիչ համաձայնություն ստանալու ՀՀ ԿԲ Վարկային Ռեգիստրից և/կամ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից հարցումներ կատարել, ստանալ և օգտագործել (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ Բանկի կողմից օգտագործվող փաստաթղթերում զետեղել, վերլուծել, գնահատել և այլն) տեղեկատվություն իմ ներկա և անցյալ դրամական պարտավորությունների մասին՝ հետևյալ նպատակներով (համաձայնությունը կհամարվի տրված ստորև աղյուսակի համապատասխան հատվածում նշագրում կատարելու դեպքում).

Նպատակ	**Ազդեցություն վարկային ամփոփ գնահատականի վրա**	**Համաձայնության կիրառման և գործողության ժամկետ**
✓ Բանկում դրամական պարտավորություններ ստանձնելու/ունենալու նպատակով իմ վարկավորման հնարավորությունները դիտարկելու (ներառյալ՝ նախկինում իմ մասին ստացված վարկային զեկույցի տեղեկատվությունը թարմացնելու) համար	Իջեցնում է	Համաձայնության տրամադրման պահից մինչև տրամադրման համար հիմք հանդիսացած Վարկային հայտի դիտարկման ավարտը, բայց ոչ ավել, քան 3 ամիս
✓ Իմ վարկ/եր/ի սպասարկման ընթացիկ մոնիթորինգն իրականացնելու (ներառյալ՝ նախկինում իմ մասին ստացված վարկային զեկույցի տեղեկատվությունը թարմացնելու) և նախկինում իմ մասին ստացված նպատակով	Չի ազդում	Համաձայնության տրամադրման պահից մինչև տրամադրման համար հիմք հանդիսացած Վարկային հայտի/պայմանագրի շրջանակներում իմ և Բանկի միջև ծագած իրավահարաբերության ամբողջ ժամանակահատվածում
Տեղեկացված եմ, որ ներկայացված համաձայնությունները պարտադիր են իմ նախաձեռնությամբ Բանկի կողմից իմ վարկավորման հնարավորությունների դիտարկման համար:		

3. Միաժամանակ տալիս եմ համաձայնություն առ այն, որ Բանկն իրավունք ունի փոխանցել իմ դրամական պարտավորությունների մասին իր ունեցած տեղեկատվությունը ՀՀ ԿԲ Վարկային Ռեգիստր և/կամ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ: Սույն համաձայնությունը կիրառելի է իմ կողմից այն տրամադրելու պահից և

գործում է մինչև դրա տրամադրման համար հիմք հանդիսացած հայտի/պայմանագրի շրջանակներում իմ և Բանկի միջև ծագած իրավահարաբերության ամբողջ ժամանակահատվածում:

4. Սույնով հաստատում եմ, որ ծանոթացել եմ «Բանկի ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններում»[3] սահմանված անձնական տվյալների ստացման, մշակման, պահպանման, օգտագործման վերաբերյալ ընդհանուր կարգին և ընդունում եմ այն:
5. Սույնով տալիս եմ համաձայնություն առ այն, որ սույն համաձայնությամբ իմ կողմից Բանկին տրամադրված, իմ վերաբերյալ Բանկին հայտնի դարձած տեղեկատվությունը Բանկը կարող է ստանալ, մշակել, պահպանել և օգտագործել իմ և Բանկի միջև այս համաձայնության տրամադրման համար հիմք հանդիսացած հայտի/պայմանագրի շրջանակներում իրավահարաբերություններ ձևավորելու, այդ իրավահարաբերությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար և գործում է այդ իրավահարաբերությունների ամբողջ ժամանակահատվածում, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Սույն համաձայնությունը կիրառելի է իմ կողմից այն տրամադրելու պահից:
6. Սույն համաձայնությունում իմ կողմից տրված տվյալների շտեմարաններ վարող կազմակերպություններից հարցումներ կատարելու մասին համաձայնություններ տրված լինելու դեպքում՝ այդ համաձայնություններում նշված մարմինները/կազմակերպությունները/աղբյուրները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ կազմակերպություններով/մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու փաստից անկախ՝ իմ անձնական տվյալների վերաբերյալ համաձայնությունները համարվում են իմ կողմից Բանկին տրամադրված, եթե այդ համաձայնությունների հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը:
7. Տեղեկացված եմ, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսած իրավական հիմքերի առկայության դեպքում ցանկացած պահի կարող եմ Բանկին ներկայացնել գրավոր պահանջ՝ Բանկի կողմից իմ անձնական տվյալները ստանալու, մշակելու, պահպանելու, օգտագործելու և սույն փաստաթղթով տրամադրված իմ մնացած համաձայնություն(ներ)ը հետ կանչելու վերաբերյալ, որը Բանկի կողմից դիտարկվում և ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկացված եմ նաև, որ համաձայնությունը հետ կանչելու դեպքում կարող է սահմանափակվել և(կամ) դադարեցվել Բանկի կողմից ինձ ծառայությունների մատուցումը:
8. Տեղեկացված եմ, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսած իրավական հիմքերի առկայության դեպքում կարող եմ Բանկին ներկայացնել գրավոր պահանջ՝ Բանկին տրամադրված իմ անձնական տվյալների ուղղման, ոչնչացման և/կամ մշակման դադարեցման վերաբերյալ, որը Բանկի կողմից դիտարկվում և ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

9. **Վարկային պատմության և վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն**

Սույնով հաստատում եմ նաև, որ նախքան իմ վերաբերյալ հարցումներ կատարելուն համաձայնություն տալը տեղեկացվել եմ, որ Վարկային պատմության և վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վրա ազդող գործոններից են վարկային պատմությունը, վարկերով ծանրաբեռնվածությունը, եկամուտը: Վարկային պատմության և վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի «Վարկային պատմության և վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն»[2] փաստաթղթում:

[1]«Ամերիաբանկ» ՓԲԸ «Բանկի կողմից ստացվող անձնական տվյալների նկարագրություն» հրապարակային փաստաթուղթ (11RBD/12CIB LI 72-01-02): Ընդունվել է Բանկի Տնօրինության 13.01.2021թ. թիվ 01/01/21 որոշմամբ:
Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[2]«Վարկային պատմության և վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն» (11RBD LI 72-01-12), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.07.2023թ. թիվ 01/89/23 որոշմամբ: Հղումը՝ https://ameriabank.am/useful-links

[3]«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD RL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ:
Հղումը՝ https://ameriabank.am/useful-links